



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2025թվականի N 0223-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 0793-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր 2023 թվականի նոյեմբերի 24-ի և Սուրեն Իլյայի Սարգսյանի 22.01.2025 թվականի թիվ 0450 դիմումը՝ և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղում գտնվող 04-058-0012-0007 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սուրեն Իլյայի Սարգսյանին (ծնվ. 19.01.1963թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղում գտնվող 04-058-0012-0007 կադաստրային ծածկագրով 900.0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 180.0քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով, իսկ 79,0 քմ հողամասն օտարել ուղիղ վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքի 30 %-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 154,44 ՀՀ դրամ, ընդհանուր 12201 /տասներկու հազար երկու հարյուր մեկ/ ՀՀ դրամ:

2.Վերականգնել Սուրեն Իլյայի Սարգսյանի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղի 04-058-0012-0007 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 1159,0 քմ օրինական հողամասի վրա 1980թ. և 1997թ. կառուցված 158,2 քմ մակերեսով բնակելի տան, 1985թ. կառուցված 14,4 քմ մակերեսով ցախանոցի, 1993թ. կառուցված 120,0 քմ մակերեսով անասնաշենքի և 2000թ. կառուցված 1,75 քմ մակերեսով պարսպի նկատմամբ:

1.Սեփականության իրավունքով Սուրեն Իլյայի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղում գտնվող 04-058-0012-0007 կադաստրային ծածկագրով 1159,0 քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված ծածկը՝ 23,29քմ մակերեսով ճանաչել օրինական:

2.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 23,29 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 874,0 ՀՀ դրամ ընդհանուր՝ 20356 (քսան հազար երեք հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:

4.Սուրեն Իլյայի Սարգսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղում գտնվող գույքին տալ ճշտվածիացե՛ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Հացիկ, 2-րդ փողոց 8:

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղՀացիկ, 3-րդփողոց 19 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023NFDNAR:

6. Ուժը կորցրած ճանաչել Արմավիր համայնքի ղեկավարի 2024թ հունիսի 13-ի թիվ 0793-Ա որոշումը:

7.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

2025 թ. փետրվարի 6
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2025թվականի N 0224-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔ ԱՐՄԱՎԻՐ, Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ,69
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՄԱՆԿԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՅՈՒՔԻՆՅԱՆԻ ԵՎ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՅՈՒՔԻՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով ,որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր , Հ. Ավետիսյան փողոց , 69 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում ' ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի 10.01.2025թ. և Դավիթ Յուրիսյանի 30.01.2025 թվականի թիվ 0604 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Դավիթ Հովհաննեսի Յուզինյանին (ծնվ. 11.08.1976թ.) և Մանվել Հովհաննեսի Յուզինյանին (ծնվ. 11.08.1976թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, 04-001-0028-0016 կադաստրային ծածկագրում գտնվող գտնվող 0.0508 հա օրինական հողամասի վրա 1967թ. կառուցված 130,6 քմ մակերեսով բնակելի տան, 1998թ. կառուցված 6,3 քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ, իսկ 2005թ. կառուցված 21,05 քմ մակերեսով ծածկոցը և 1997թ. կառուցված 23,5 քմ մակերեսով ծածկոցը համարել ինքնակամ:

3. Արփիկ Վոլոդյայի Ավետիսյանին պատկանող 04-001-0028-0016 կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Հ. Ավետիսյան փողոց, 69 հողամաս:

4. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

2025 թ. փետրվարի 06
ք. Արմավիր



Կ. ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 0225-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՆԵԼԼԻ ՍԵՐԳԵՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Տեղական ինքնակառավարման մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով «ԱՐՄԱՎԻՐ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը և հիմք ընդունելով Նելլի Սերգեյի Մովսիսյանի 20.01.2025թ թիվ 0372 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Քաղաքացի Նելլի Սերգեյի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում/վկայական թիվ 25092024-04-0045/ գտնվող 0.002 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել խառը կառուցապատումից՝ ընդհանուր օգտագործման:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

2025 թ. փետրվարի 6
ք. Արմավիր



Կ. ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 0226-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով «ԱՐՄԱՎԻՐ-3» միկրոռեզիդենսյալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը և հիմք ընդունելով Սուսաննա Վարազդատի Խաչատրյանի 10.01.2025թ թիվ 0166 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Սուսաննա Վարազդատի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղում /վկայական թիվ 12122024-04-0064/ գտնվող 0.022 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատումից՝ հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

2025 թ. փետրվարի 6
ք. Արմավիր



Կ. ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 0227-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՀԱՅԻԿ, 16-ՐԴ ՓՈՂՈՑ , 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ, 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՍՈՒՆԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀԱԿՈՐՅԱՆԻ, ՀԱՄՍԻԿ ՊԱՏՎԱԿԱՆԻ ՀԱԿՈՐՅԱՆԻՆ, ԳԵՎՈՐԳ ՍԱՍՈՒՆԻԿԻ ՀԱԿՈՐՅԱՆԻ ԵՎ ՔՐԻՍՏ ՍԱՍՈՒՆԻԿԻ ՀԱԿՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին , 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով ,որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Հացիկ, 16-րդ փողոց, 2-րդ փակուղի, 3 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում ' ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, Սասունիկ Անդրանիկի Հակոբյանի 07.01.2025 թվականի թիվ 0025 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Սասունիկ Անդրանիկի Հակոբյանին (ծնվ. 02.03.1950թ.), Հասմիկ Պատվականի Հակոբյանին (ծնվ. 08.02.1957թ.), Գևորգ Սասունիկի Հակոբյանին (ծնվ. 21.05.1990թ.) և Քրիստ Սասունիկի Հակոբյանին (ծնվ. 06.04.1978թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղում գտնվող 04-058-0045-0011 կադաստրային ծածկագրով 1600,0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 320,0 քմ մակերեսով հողամասը անհատուց տրամադրել նրան՝ սեփականության իրավունքով:

2. Վերականգնել Սասունիկ Անդրանիկի Հակոբյանին, Հասմիկ Պատվականի Հակոբյանին, Գևորգ Սասունիկի Հակոբյանին և Քրիստ Սասունիկի Հակոբյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Հացիկ, 04-058-0045-0011 կադաստրային ծածկագրում գտնվող գտնվող 0.19200 հա օրինական հողամասի վրա 1990թ. և 1995թ. կառուցված 173,4 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ, իսկ 2019թ. կառուցված 19,5 քմ մակերեսով պարիսպը համարել ինքնակամ:

3. Սասունիկ Անդրանիկի Հակոբյանին, Հասմիկ Պատվականի Հակոբյանին, Գևորգ Սասունիկի Հակոբյանին և Քրիստ Սասունիկի Հակոբյանին պատկանող 04-058-0045-0011 կադաստրային ծածկագրից գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Հացիկ, 16-րդ փողոց, 2-րդ փակուղի, 3 բնակելի տուն:

4. Ընդունել ի գիտություն, որ

1) կառուցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

6. Ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի Արմավիր համայնքի ղեկավարի դեկտեմբերի 3-ի թիվ 1487-Ա որոշումը:

7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

8. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

2025 թ. փետրվարի 6
ք. Արմավիր



Կ. ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 Փետրվարի 2025 թվականի N 0228-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը և Ա/Ձ Կարապետ Սահակյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել Ա/Ձ Կարապետ Սահակյանի հայտը և թույլատրել Արմավիր համայնք, գ. Արաքս, Ս. Թեհլերյան փ. 1 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների իրացումով:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Կարապետ Սահակյանին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

2025 թ. Փետրվարի 6
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 Փետրվարի 2025 թվականի N 0229-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի «Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին» թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 131-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Ծիլ Տուր» ՍՊԸ-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել «Ծիլ Տուր» ՍՊԸ-ի դիմումը և թույլատրել Արմավիր համայնք, գ. Սարդարապատ, Արուվյան փ. 6/1 հասցեում գտնվող տարածքում արտաքին գովազդ տեղադրելը:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին «Ծիլ Տուր» ՍՊԸ-ին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

2025 թ. Փետրվարի 6
ք. Արմավիր



Կ. ՄԿՐՏՉՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎՈՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
«Արմավիրի մարզ, ք. Արմավիր, (0237) 2-36-54, armavir.municipality@gmail.com»

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2025 թվականի N 0230-Ա

**ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ քաղաքացի Կարինե Հովհաննեսի Պողոսյանի կողմից ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց, որ.

Քաղաքացի Կարինե Հովհաննեսի Պողոսյանը խախտելով վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի սահմանած պահանջները՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ իրականացրել է առևտուր, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Գևորգյանի 27.12.2024թ. թիվ 50-15/797 գրության հիման վրա 2025 թվականի հունվարի 8-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկա է եղել նաև իրավախախտող Կարինե Հովհաննեսի Պողոսյանը:

Արմավիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի հունվարի 30-ին հրավիրվել է վարչական վարույթի նիստ, որի մասին ծանուցանք իրավախախտող Կարինե Հովհաննեսի Պողոսյանին, ուղարկվել է փոստային առաքմամբ հիմն՝ ստորագրությամբ ստացված ծանուցագիր:

Նիստին ներկա իրավախախտող Կարինե Հովհաննեսի Պողոսյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հերոանջները՝ ներկայացնելով բառակարգներ:

Վարչական ակտն քննարկելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Գևորգյանի 27.12.2024թ. թիվ 50-15/797 գրությամբ: Վարչական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 30-ի թիվ 04/25 արձանագրությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ընկության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Իրավախախտող Կարինե Հովհաննեսի Պողոսյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները՝ ներկայացնելով լուսանկարներ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 30.01.2025 թվականի թիվ 04/25 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Քաղաքացի Կարինե Հովհաննեսի Պողոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված վարչական վարույթը կարճել:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարինե Հովհաննեսի Պողոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Դ

Վ. ՄԿՐՏՅԱՆ



2025թ. փետրվարի 06
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2025 թվականի N 0231-Ա

ԷԴԳԱՐ ԺՈՐԱՅԻ ԹԻՂԵՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ քաղաքացի Էդգար Ժորայի Թիզյանի կողմից ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց, որ.

Քաղաքացի Էդգար Ժորայի Թիզյանը խախտելով վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի սահմանած պահանջները՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ իրականացրել է առևտուր, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի քաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Գևորգյանի 27.12.2024թ. թիվ 50-15/793 գրության հիման վրա 2025 թվականի հունվարի 8-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկա է եղել նաև իրավախախտող Էդգար Ժորայի Թիզյանը:

Արմավիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի հունվարի 30-ին հրավիրվել է վարչական վարույթի նիստ, որի մասին ծանուցումը իրավախախտող Էդգար Ժորայի Թիզյանին, ուղարկվել է փոստային առաքմամբ /հիմք՝ ստորագրությամբ ստացված ծանուցագիր/:

Նիստին ներկա իրավախախտող Էդգար Ժորայի Թիզյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները՝ ներկայացնելով լուսանկարներ:
Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Գևորգյանի 27.12.2024թ. թիվ 50-15/793 գրությունը:

Վարչական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 30-ի թիվ 06/25 արձանագրությունը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Իրավախախտող էղգար ժորայի Թիգյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները՝ ներկայացնելով լուսանկարներ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը. Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 30.01.2025 թվականի թիվ 06/25 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Բաղաքացի էղգար ժորայի Թիգյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի էղգար ժորայի Թիգյանին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ



Կ. ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2025 թվականի N 0232-Ա

ԷՆՆԵՍՏ ԺՈՐԱՅԻ ԹԻՉՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ քաղաքացի Էննեստ Ժորայի Թիզյանի կողմից ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց, որ.

Քաղաքացի Էննեստ Ժորայի Թիզյանը խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի սահմանած պահանջները՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ իրականացրել է առևտուր, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Գևորգյանի 27.12.2024թ. թիվ. 50-15/798 գրության հիման վրա 2025 թվականի հունվարի 8-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկա է եղել նաև իրավախախտող Էննեստ Ժորայի Թիզյանը:

Արմավիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի հունվարի 30-ին հրավիրվել է վարչական վարույթի նիստ, որի մասին ծանուցումը իրավախախտող Էննեստ Ժորայի Թիզյանին, ուղարկվել է փոստային առաքմամբ /հիմք՝ ստորագրությամբ ստացված ծանուցագիր/:

Նիստին ներկա իրավախախտող Էննեստ Ժորայի Թիզյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները՝ ներկայացնելով լուսանկարներ:
Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի քաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Գևորգյանի 27.12.2024թ. թիվ 50-15/798 գրությունը:

Վարչական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 30-ի թիվ 08/25 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Իրավախախտող էոնեստ ժորայի Թիգյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները՝ ներկայացնելով լուսանկարներ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 30.01.2025 թվականի թիվ 08/25 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Քաղաքացի էոնեստ ժորայի Թիգյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված վարչական վարույթը կարճել:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի էոնեստ ժորայի Թիգյանին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. փետրվարի 06
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
«Հ. Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com»

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2025 թվականի N 0233-Ա

ԱՊԵՏՆԱԿ ԱՐԱՐԱՏԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը ըննության առնելով վարչական գործը՝ քաղաքացի Ապետնակ Արարատի Թադևոսյանի կողմից ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց, որ.

Քաղաքացի Ապետնակ Արարատի Թադևոսյանը խախտելով վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի սահմանած պահանջները՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ իրականացրել է առևտուր, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Գևորգյանի 03.01.2025թ. թիվ 50/30/873-25 գրության հիման վրա 2025 թվականի հունվարի 8-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկա է եղել նաև իրավախախտող Ապետնակ Արարատի Թադևոսյանը:

Արմավիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի հունվարի 30-ին հրավիրվել է վարչական վարույթի նիստ, որի մասին ծանուցումը իրավախախտող Ապետնակ Արարատի Թադևոսյանին, ուղարկվել է փոստային առաքմամբ /հիմք՝ ստորագրությամբ ստացված ծանուցագիր/:

Նիստին ներկա իրավախախտող Ապետնակ Արարատի Թադևոսյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները՝ ներկայացնելով լուսանկարներ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի քաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Գնորգյանի 03.01.2025թ. թիվ 50/30/873-25 գրությունը: Վարչական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 30-ի թիվ 10/25 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Իրավախախտող Ապետնակ Արարատի Թաղևոսյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները՝ ներկայացնելով լուսանկարներ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 30.01.2025 թվականի թիվ 10/25 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Ապետնակ Արարատի Թաղևոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ապետնակ Արարատի Թաղևոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

Կ. ՄԿՐՏՉՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 0234-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք, 107-րդ թաղամաս, 218 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ.-ի նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, ըստ 20.11.2023թ ժառանգության իրավունքի վկայագրի և Սարգիս Գասպարի Ղարսլեյանի 06.02.2025 թվականի թիվ 0750 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սարգիս Գասպարի Ղարսլեյանին (ծնվ. 25/01/1960թ.), Անահիտ Խաչիկի Պալյանին (ծնվ. 10/05/1963թ.), Մարիամ Սարգսի Ղարսլեյանին (ծնվ. 01/09/1984թ.), Գոհար Գասպարի Ղարսլեյանին (ծնվ. 12/05/1964թ.) և Գարիկ Սարգսի Ղարսլեյանին (ծնվ. 16/07/1986թ.) պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Լենուղի 7-րդ փողոց, 9 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված 2018թ բնակելի տունը՝ 148,11 քմ ներքին և 169,07 քմ արտաքին մակերեսով, 2018թ կառուցված խորդանոցը՝ 25,64 քմ ներքին և 29,22 քմ արտաքին մակերեսով և 2018թ կառուցված պարիսպը՝ 19,57 քմ մակերեսով համարել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

